ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ
15 մարտի 2023 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10/2
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 10-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2-ՐԴ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 57 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետի տեղակալներ՝ Տիգրան Ավինյանը, Ստեփան Մաչյանը, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Սեյրան Մեջլումյանը, քաղաքապետի խորհրդականներ՝ Կամո Արեյանը, Արամ Դանիելյանը, Սուսաննա Գրիգորյանը, Կորյուն Մկրտչյանը, Սաշա Կատվալյանը, քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Վահան Խաչատրյանը, իրավաբանական վարչության պետ Տարոն Մարգարյանը, կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը, ֆինանսական վարչության պետ Վիլեն Արևշատյանը, կոմունալ տնտեսության վարչության պետ Արսեն Կարոյանը, հանրակրթության վարչության պետ Մարգարիտ Խաչատրյանը, քարտուղարության ընդհանուր բաժնի պետ Հովհաննես Հովհաննեսյանը:

Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ղեկավար Արմեն Գալջյանի կողմից նիստին հրավիրված էին՝ ԵԿՄ վարչության նախագահ Սասուն Միքայելյանը, ԵԿՄ աշխատակազմի ղեկավար Ռաֆայել Ֆարմանյանը և ԵԿՄ «Արծիվ-24» գումարտակի հրամանատար Մանվել Հովսեփյանը:

Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանի կողմից առաջարկվեց Երևանի ավագանու հերթական նիստը գումարել 2023 թվականի ապրիլի 18-ին, ժամը 11.00-ին:

ՈՐՈՇՎԵՑ – Երևանի ավագանու հերթական նիստը գումարել 2023 թվականի ապրիլի 18-ին, ժամը 11.00-ին:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 46 անդամ
ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 46, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն:

Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը հայտնեց, որ 2023 թվականի մարտի 15-ի նիստի օրակարգի նախագծից հանվում է չզեկուցվող 3-րդ հարցը՝ «Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի մարտի 16-ի N 345-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին», ինչպես նաև հեղինակի պահանջով, հանվում է 20-րդ հարցը՝ «Երևան քաղաքում Հրանտ Մաթևոսյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին»: Օրակարգի նախագծի 12-րդ չզեկուցվող՝ ««Երևանի հ.116 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչելու մասին» հարցը տեղափոխվում է օրակարգի նախագծի՝ որպես 14-րդ զեկուցվող հարց: Օրակարգի նախագծի 16-րդ և 17-րդ հարցերը տեղափոխվում է, որպես օրակարգի նախագծի 12-րդ և 13-րդ հարցեր:

Երևանի քաղաքապետը նշեց, որ 2023 թվականի մարտի 15-ի հերթական նիստի օրակարգի նախագծում ընդգրկված է 23 հարց, որից՝ 2-ից 11-րդ հարցերը չզեկուցվող են, դրանք են.

2. Երևան համայնքի սեփականության 2022 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:

3. Երևան քաղաքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 27-ի N693-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

4. Երևան քաղաքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 27-ի N693-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

5. «Երևանտրանս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին:

6. «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին:

7. «Երքաղլույս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին:

8. «Երևանի քաղաքային նոր աղբավայր» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին:

9. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

10. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի փետրվարի 8-ի N527-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

11.Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին:

Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը ներկայացրեց Երևանի ավագանու 2023 թվականի մարտի 15-ի հերթական նիստի օրակարգի նախագիծը.

1. Երևանի ավագանու 10-րդ նստաշրջանի 2-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Երևան համայնքի սեփականության 2022 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին: (Զեկուցվող)
3. Երևան քաղաքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 27-ի N693-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Զեկուցվող)
4. Երևան քաղաքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 27-ի N693-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Զեկուցվող)
5. «Երևանտրանս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին: (Զեկուցվող)
6. «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին: (Զեկուցվող)
7. «Երքաղլույս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին: (Զեկուցվող)
8. «Երևանի քաղաքային նոր աղբավայր» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին: (Զեկուցվող)
9. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Զեկուցվող)
10. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի փետրվարի 8-ի N527-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Զեկուցվող)
11. Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին: (Զեկուցվող)
12. Շառլ Ազնավուրի հիշատակը հավերժացնող հուշարձանի տեղադրմանը համաձայնություն տալու մասին:
13. Երևան քաղաքում փողոցներ անվանակոչելու մասին:
14. «Երևանի հ.116 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչելու մասին:
15. Երևանի զարգացման 2022 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության մասին:
16. Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին:
17. Երևան քաղաքում Աննա Տեր-Ավետիքյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին:
18. Երևան քաղաքում Արմեն Խոստիկյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին:
19. Երևան քաղաքում Հովհաննես Գրիգորյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին:
20. Երևան քաղաքում փողոցներ անվանակոչելու մասին:
21. Երևան քաղաքում Սարգիս Բաղդասարյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին:

22. Երևան քաղաքում Էդուարդ Իսաբեկյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին:
23. Գույքը սեփականության իրավունքով անհատույց օտարելու (նվիրելու) և Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի հունիսի 22-ի հ.412-Ա և 2022 թվականի սեպտեմբերի 23-ի հ.630-Ա որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին:

1. ԼՍԵՑԻՆ – Երևանի ավագանու 10-րդ նստաշրջանի 2-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 47 անդամ
ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 46, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1
Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը հայտնեց, որ հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 18.06.2009թ. N1-Ն որոշման 114-րդ կետի 5-րդ ենթակետը առաջնահերթ քվեարկության են դրվում օրակարգում ընդգրկված չզեկուցվող՝ 2-ից 11-րդ հարցերը:

Հարց 2. – Երևան համայնքի սեփականության 2022 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:
ՈՐՈՇՎԵՑ - 1. Հաստատել Երևան համայնքի սեփականության 2022 թվականի գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածի:

Հարց 3. – Երևան քաղաքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 27-ի N693-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի «Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 693-Ն որոշման NN 1, 2, 3, 4, 5, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1-7 հավելվածների:

Հարց 4. – Երևան քաղաքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 27-ի N693-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
ՈՐՈՇՎԵՑ – 1.Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի «Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 693-Ն որոշման NN 1, 2, 3, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար NN 1-5 հավելվածների:

Հարց 5. – «Երևանտրանս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Հաստատել «Երևանտրանս» փակ բաժնետիրական ընկերության՝ Երևան քաղաքի 2022թ. բյուջեից բաժնետոմսերի և կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերման նպատակով հատկացված 34,500,000 (երեսունչորս միլիոն հինգ հարյուր հազար) դրամի սահմաններում՝ կանոնադրական կապիտալի՝ 34,499,430 (երեսունչորս միլիոն չորս հարյուր իննսունինը հազար չորս հարյուր երեսուն) դրամի չափով ավելացմամբ պայմանավորված՝ Երևան համայնքի կողմից լրացուցիչ ձեռք բերված 15646 (տասնհինգ հազար վեց հարյուր քառասունվեց) հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը՝ 2,205 (երկու հազար երկու հարյուր հինգ) դրամ անվանական արժեքով տեղաբաշխման արդյունքները:

2. «Երևանտրանս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը սահմանել 319,947,705 (երեք հարյուր տասնինը միլիոն ինը հարյուր քառասունյոթ հազար յոթ հարյուր հինգ) դրամ, որը կազմում է 145101 (հարյուր քառասունհինգ հազար հարյուր մեկ) հատ 2,205 (երկու հազար երկու հարյուր հինգ) դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսեր:

3. Հաստատել «Երևանտրանս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

Հարց 6. – «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Հաստատել «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության՝ Երևան քաղաքի 2022թ. բյուջեից բաժնետոմսերի և կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերման նպատակով հատկացված 2,357,000,000 (երկու միլիարդ երեք հարյուր հիսունյոթ միլիոն) դրամի չափով կանոնադրական կապիտալի ավելացմամբ պայմանավորված՝ Երևան համայնքի կողմից լրացուցիչ ձեռք բերված 235,700 (երկու հարյուր երեսունհինգ հազար յոթ հարյուր) հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը՝ 10000 (տասը հազար) դրամ անվանական արժեքով, տեղաբաշխման արդյունքները:

2. «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը սահմանել 5,153,540,000 (հինգ միլիարդ հարյուր հիսուներեք միլիոն հինգ հարյուր քառասուն հազար) դրամ, որը կազմում է 515,354 (հինգ հարյուր տասնհինգ հազար երեք հարյուր հիսունչորս) հատ 10.000 (տասը հազար) դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսեր:

3. Հաստատել «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

Հարց 7. – «Երքաղլույս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 11. Հաստատել «Երքաղլույս» փակ բաժնետիրական ընկերության՝ Երևան քաղաքի 2022թ. բյուջեից բաժնետոմսերի և կանոնադրական կապիտալում

մասնակցության ձեռքբերման նպատակով հատկացված 145,144,000 (հարյուր քառասունհինգ միլիոն հարյուր քառասունչորս հազար) դրամի սահմաններում՝ կանոնադրական կապիտալի՝ 144,399,000 (հարյուր քառասունչորս միլիոն երեք հարյուր իններորդինը հազար) դրամով ավելացմամբ պայմանավորված՝ Երևան համայնքի կողմից լրացուցիչ ձեռք բերված 127 (հարյուր քսանյոթ) հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը՝ 1,137,000 (մեկ միլիոն հարյուր երեսունյոթ հազար) դրամ անվանական արժեքով տեղաբաշխման արդյունքները:

2. «Երքաղլույս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը սահմանել 180,783,000 (հարյուր ութսուն միլիոն յոթ հարյուր ութսուներեք հազար) դրամ, որը կազմում է 159 (հարյուր հիսունինը) հատ 1,137,000 (մեկ միլիոն հարյուր երեսունյոթ հազար) դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսեր:

3. Հաստատել «Երքաղլույս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

Հարց 8. – «Երևանի քաղաքային նոր աղբավայր» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Հաստատել «Երևանի քաղաքային նոր աղբավայր» փակ բաժնետիրական ընկերության՝ Երևան քաղաքի 2022թ. բյուջեից բաժնետոմսերի և կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերման նպատակով հատկացված 10,882,700 (տասը միլիոն ութ հարյուր ութսուներկու հազար յոթ հարյուր) դրամի սահմաններում՝ կանոնադրական կապիտալի՝ 10,880,000 (տասը միլիոն ութ հարյուր ութսուն հազար) դրամի չափով ավելացմամբ պայմանավորված՝ Երևան համայնքի կողմից լրացուցիչ ձեռք բերված 1088 (մեկ հազար ութսունութ) հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը՝ 10,000 (տասը հազար) դրամ անվանական արժեքով տեղաբաշխման արդյունքները:

2. «Երևանի քաղաքային նոր աղբավայր» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը սահմանել 67.300.000 (վաթսունյոթ միլիոն երեք հարյուր հազար) դրամ, որը կազմում է 6730 (վեց հազար յոթ հարյուր երեսուն) հատ 10000 դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսեր:

3. Հաստատել «Երևանի քաղաքային նոր աղբավայր» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

Հարց 9. – Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1.Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը. Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական

շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հունիսի 16-ի N 16-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 10 որոշման N 2 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Քարտուղարություն» գլուխը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«

Հ/հ	Հաստիքների անվանումը	Հաստիքների քանակը	Հաստիքի ամսական պաշտոնային դրույքաչափը	Հավելում	Ընդամենը ամսական աշխատավարձը
		Քարտուղարություն			
1	քարտուղարության պետ	1	697,000		697,000
2	քարտուղարության պետի տեղակալ	1	561,000		561,000
3	գլխավոր մասնագետ	2	323,000		646,000
		Ընդհանուր բաժին			
4	բաժնի պետ	1	408,000		408,000
5	գլխավոր մասնագետ	5	289,000		1,445,000
6	առաջատար մասնագետ	1	282,200		282,200
7	առաջին կարգի մասնագետ	2	272,000		544,000
		Քաղաքացիների սպասարկման բաժին			
8	բաժնի պետ	1	408,000		408,000
9	գլխավոր մասնագետ	7	289,000		2,023,000
10	առաջատար մասնագետ	11	282,200		3,104,200
11	առաջին կարգի մասնագետ	4	272,000		1,088,000
12	քաղաքացիական կացության ակտերի գրանցման սպասարկման կենտրոնի առաջին կարգի մասնագետ	17	132,300		2,249,100
		Զանգերի սպասարկման և աջակցման բաժին			
13	բաժնի պետ	1	408,000		408,000
14	գլխավոր մասնագետ	2	289,000		578,000
15	առաջատար մասնագետ	8	282,200		2,257,600
16	առաջին կարգի մասնագետ	3	272,000		816,000
		Արխիվային գործի վարման բաժին			
17	բաժնի պետ	1	408,000		408,000
18	գլխավոր մասնագետ-	1	289,000	34680	323,680

	գլխավոր արխիվագետ				
19	առաջին կարգի մասնագետ	2	272,000		544,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	71			18,790,780

»

2) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Ընդամենը՝ Երևանի քաղաքապետարան»» տողում «646.5» և «220,656,180» թվերը փոխարինել համապատասխանաբար «658.5» և «224,443,780» թվերով:

3) «Ամբողջը» տողում «1946.5» և «605,236,980» թվերը փոխարինել «1958.5» և «609,024,580» թվերով:

Հարց 10. – Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի փետրվարի 8-ի N527-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի փետրվարի 8-ի ««Երևանի Շենգավիթի սեղանի թենիսի և թենիսի մանկապատանեկան մարզադպրոց», «Երևանի Շենգավիթի ակրոբատիկայի և գեղարվեստական մարմնամարզության մանկապատանեկան մարզադպրոց» և «Շենգավիթի նետաձգության մարզակումբ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները վերակազմակերպելու, «Շենգավիթի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանափոխման և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին» N 527-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման վերնագրում և Որոշման 1-ին կետում «Շենգավիթի նետաձգության մարզակումբ» բառերը փոխարինել «Երևանի Շենգավիթի նետաձգության մարզակումբ» բառերով.

2) Որոշման վերնագրում, Որոշման 1-ին, 2-րդ և 4-րդ կետերում «Շենգավիթի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» բառերը փոխարինել «Երևանի Շենգավիթի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» բառերով.

3) Որոշման 4-րդ կետով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Հարց 11. – Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Թույլատրել սույն որոշման հավելվածում նշված անձանց՝ 2023 թվականի ընթացքում շարունակելու հավելվածում նշված տարածքներում և սահման-ված պայմաններով նախորդ տարիներին կազմակերպված ծառայողական ավտոկայա-նատեղերի շահագործումը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 47 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 38, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 9

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը տեղեկացրեց, որ այժմ քննարկման է ներկայացվում 2023 թվականի մարտի 15-ի հերթական նիստի զեկուցվող հարցերը.

12. ԼՍԵՑԻՆ - Շառլ Ազնավուրի հիշատակը հավերժացնող հուշարձանի տեղադրմանը համաձայնություն տալու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ–Երևանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Ավինյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել է ավագանու 2 անդամ.

1. Միքայել Մանրիկյան - Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար

2. Իզաբելլա Աբգարյան - Երևան քաղաքի ավագանու անդամ:

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Ավինյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Հակոբ Մելիքյանը տեղեկացրեց, որ «Շառլ Ազնավուրի հիշատակը հավերժացնող հուշարձանի տեղադրմանը համաձայնություն տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Տալ համաձայնություն Հայաստանի ազգային հերոս, երգիչ, երգահան, հասարակական գործիչ Շառլ Ազնավուրի հիշատակը հավերժացնող հուշարձանը Երևան քաղաքի Ֆրանսիայի հրապարակում տեղադրելու համար:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 50 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 49, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն:

13. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքում փողոցներ անվանակոչելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Ավինյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Հակոբ Մելիքյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքում փողոցներ անվանակոչելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Արման Անտոնյան - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Արաբկիրի 45-րդ փողոցն անվանակոչել հայ նշանավոր կինոռեժիսոր, սցենարիստ, ՀԽՍՀ և ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Հենրիկ Մալյանի անվամբ՝ «Հենրիկ Մալյան փողոց»:

2. Երևան քաղաքի Արաբկիրի 47-րդ փողոցն անվանակոչել թատրոնի և կինոյի հայ անվանի դերասան, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Սոս Սարգսյանի անվամբ՝ «Սոս Սարգսյան փողոց»:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 54 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 53, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն:

14. ԼՍԵՑԻՆ - Երևանի հ.116 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ–Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետ Մարգարիտ Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Լևոն Զաքարյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Հակոբ Մելիքյանը տեղեկացրեց, որ «Երևանի հ.116 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցել է ավագանու 1 անդամ.

1.Անի Խաչատրյան – Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար:

Ելույթով հանդես եկավ նաև «Երկրապահ կամավորականների միության» վարչության նախագահ Սասուն Միքայելյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. «Երևանի հ.116 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչել դպրոցի շրջանավարտ, 2016 թվականի արցախյան քառօրյա պատերազմի մասնակից Սամվել Հովսեփյանի անվամբ՝ «Երևանի Սամվել Հովսեփյանի անվան հ.116 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 55 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 55, դեմ՝ 0, ձեռնպահ՝

Որոշումն ընդունվել է միաձայն:

15. ԼՍԵՑԻՆ - Երևանի զարգացման 2022 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ–Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի զարգացման և ներդրումային ծրագրերի վարչության պետ Արմեն Հարությունյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել է ավագանու 4 անդամ.

1. Լուսինե Գևորգյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ,

2.Լևոն Զաքարյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ,

3.Արթուր Մայիլյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ,

4. Արթուր Իսպիրյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ:

Հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը և քաղաքապետի տեղակալ Տիգրան Ավինյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լուսինե Գևորգյանը տեղեկացրեց, որ «Երևանի զարգացման 2022 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել է ավագանու 3 անդամ.

1. Լևոն Զաքարյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ,

2.Անի Խաչատրյան – Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար,

3.Արմեն Գալջյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ղեկավար:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Ընդունել ի գիտություն Երևանի քաղաքապետի կողմից ներկայացված Երևանի զարգացման 2022 թվականի ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 54 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 46, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 8

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

16. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Լևոն Հովհաննիսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել է ավագանու 4 անդամ.

1. Սերգեյ Գյոզալյան – Երևան քաղաքի ավագանու անդամ,
2. Տիգրան Գալստյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
3. Արման Բաբաջանյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
4. Պավել Սարգսյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ:

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը և քաղաքապետի առաջին տեղակալ Լևոն Հովհաննիսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լուսինե Գևորգյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Արտահերթ ելույթով հանդես եկան Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար Դավիթ Խաժակյանը և ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Լուսինե Գևորգյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել է ավագանու 2 անդամ.

1. Լևոն Զաքարյան - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
2. Արման Հարությունյան - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1.Հաստատել Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը՝ համաձայն NN 1 - 5 հատվածների:

1. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 50 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 48, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

17. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքում Աննա Տեր-Ավետիքյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևան քաղաքի ավագանու անդամ Իզաբելլա Աբգարյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1.Լևոն Զաքարյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Հայկ Միրզոյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքում Աննա Տեր-Ավետիքյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել է ավագանու 2 անդամ.

1.Անի Խաչատրյան – Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար

2.Նաիրա Խառատյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ:

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ Երևան քաղաքի ավագանու անդամ Իզաբելլա Աբգարյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Արաբկիրի 38 փողոցն անվանակոչել ճարտարապետ Աննա Տեր-Ավետիքյանի անվամբ՝ «Աննա Տեր-Ավետիքյան փողոց»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 54 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 52, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն:

18. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքում Արմեն Խոստիկյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արմեն Ղալեչյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Հայկ Միրզոյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքում Արմեն Խոստիկյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել է ավագանու 2 անդամ.

1.Արթուր Իսպիրյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ:

2.Սիփան Ասատրյան - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Ներքին Շենգավիթի 12-րդ փողոցն անվանակոչել կինոյի, հեռուստատեսության և թատրոնի դերասան Արմեն Խոստիկյանի անվամբ՝ «Արմեն Խոստիկյան փողոց»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 57 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 53, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

19. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքում Հովհաննես Գրիգորյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Սիփան Ասատրյան:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1.Լևոն Զաքարյան - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետի խորհրդական Կամո Արեյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Հայկ Միրզոյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքում Հովհաննես Գրիգորյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Ներքին Շենգավիթի 1-ին փողոցն անվանակոչել հայ բանաստեղծ Հովհաննես Գրիգորյանի անվամբ՝ «Հովհաննես Գրիգորյան փողոց»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 53 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 48, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

20. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքում փողոցներ անվանակոչելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Նուարդ Վարդանյան:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել է ավագանու 2 անդամ.

1.Անի Խաչատրյան - Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար

2.Սերգեյ Գյոզալյան – Երևան քաղաքի ավագանու անդամ:

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Նուարդ Վարդանյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Հայկ Միրզոյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքում Հովհաննես Գրիգորյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է բացասական եզրակացություն:

Հարակից զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1.Թեհմինա Վարդանյան – Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ:

Հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի ավագանու մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Հայկ Միրզոյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել է ավագանու 4 անդամ.

1.Սերգեյ Գյոզալյան – Երևան քաղաքի ավագանու անդամ

2.Լուսինե Գևորգյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

3.Դիանա Քերոբյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

4.Արմեն Ներսիսյան – Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Արաբկիրի 27-րդ փողոցն անվանակոչել հայ բանաստեղծուհի, թարգմանչուհի Մարո Մարգարյանի անվամբ՝ «Մարո Մարգարյան փողոց»:

2. Երևան քաղաքի Արաբկիրի 41-րդ փողոցն անվանակոչել բանաստեղծուհի, հասարակական գործիչ Արմենուհի Տիգրանյանի անվամբ՝ «Արմենուհի Տիգրանյան փողոց»:

3. Երևան քաղաքի Արաբկիրի 53-րդ փողոցն անվանակոչել հայ արձակագիր, բանաստեղծուհի Էլեն Բյուզանդի անվամբ՝ «Էլեն Բյուզանդի փողոց»:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 50 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 44, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 4

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

21. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքում Սարգիս Բաղդասարյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Նուարդ Վարդանյան:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Հայկ Միրզոյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքում Սարգիս Բաղդասարյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Նորքի 9-րդ փողոցն անվանակոչել հայ քանդակագործ, ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ Սարգիս Բաղդասարյանի անվամբ՝ «Սարգիս Բաղդասարյան փողոց»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 51 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 50, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

22. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքում Էդուարդ Իսաբեկյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արման Հարությունյան:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Հայկ Միրզոյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքում Էդուարդ Իսաբեկյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Նորքի 8-րդ փողոցն անվանակոչել գեղանկարիչ, ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ Էդուարդ Իսաբեկյանի անվամբ՝ «Էդուարդ Իսաբեկյան փողոց»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 52 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 50, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

23. ԼՍԵՑԻՆ - Գույքը սեփականության իրավունքով անհատույց օտարելու (նվիրելու) և Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի հունիսի 22-ի հ.412-Ա և 2022 թվականի սեպտեմբերի 23-ի հ.630-Ա որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության պետ Արսեն Կարոյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել է ավագանու 4 անդամ.

1.Լևոն Զաքարյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2. Սաթենիկ Մկրտչյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

3.Մանուել Մարգարյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

4.Դիանա Քերոբյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ:

Հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետի խորհրդական Կամո Արեյանը և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության պետ Արսեն Կարոյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լուսինե Գևորգյանը տեղեկացրեց, որ «Գույքը սեփականության իրավունքով անհատույց օտարելու (նվիրելու) և Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի հունիսի 22-ի հ.412-Ա և 2022 թվականի սեպտեմբերի 23-ի հ.630-Ա որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել է ավագանու 4 անդամ.

1.Իզաբելլա Աբգարյան – Երևան քաղաքի ավագանու անդամ

2.Լևոն Զաքարյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

3.Սերգեյ Գյոզալյան - Երևան քաղաքի ավագանու անդամ

4.Սաթենիկ Մկրտչյան - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ:

Ելույթների վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան համայնքի սեփականություն համարվող գույքը (թվով 1041 վերելակներ), ընդհանուր 10.051.695.417 (տասը միլիարդ հիսունմեկ միլիոն վեց հարյուր ինսունհինգ հազար չորս հարյուր տասնյոթ դրամ) ՀՀ դրամ արժեքով, սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) բազմաբնակարան շենքերի շինությունների սեփականատերերին ի դեմս շենքի ընդհանուր բաժնային սեփականության կառավարումն իրականացնող կառավարման մարմիններին՝ համաձայն հավելվածի:

2. Երևանի քաղաքապետին՝ ապահովել սույն որոշման հավելվածում նշված բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ նվիրատվության պայմանագրերի և վերելակների հանձնման-ընդունման ակտերի կնքումը:

3. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման հավելվածում նշված բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինները պարտավոր են անհատույց սեփականության իրավունքով փոխանցված վերելակների ընթացիկ սպասարկումն իրականացնել նվիրատվության պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան:

4.Ուժը կորցրած ճանաչել՝

1) Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի հունիսի 22-ի «Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին» հ.412-Ա որոշումը,

2) Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 23-ի «Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին». հ.630-Ա որոշումը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 47 անդամ
ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 46, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Կազմեց՝
Լ. Ալոյան